

ՕԾՈՒՄ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՍԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ
«ՄԻԱՍՆԱԲԱՐ ԿԱՌՈՒՑԵՑԻՆՔ ԵՒ ՄԻԱՍՆԱԲԱՐ ՊԻՏԻ ՏՕՆԱԽՄԲԵՆՔ»

Գոհունակութեամբ կը հաղորդենք թեմիս համայն հաւատացեալներուն, թէ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ կառուցման աշխատանքները աւարտած են՝ շնորհիւ Առաջնորդարանի Բարերարներու, Կնքահայրերու եւ հաւատացեալներու նուիրատուութիւններուն:

Երախտապարտ ենք, որ ընդառաջելով Առաջնորդ Սրբազան Զօր եւ Թեմական Խորհուրդի հրաւերին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը Սեպտեմբեր 10-12, 2010, օրհնաբեր այցելութիւն պիտի շնորհէ Արեւմտեան Թեմին:

Նորին Սրբութիւնը մասնակցութեամբ Առաջնորդ Սրբազան Զօր, հրաւիրեալ բարձրաստիճան հոգեւորականներու, թեմիս հոգեւորականներու եւ Խաչատուրեան Երգչախումբի, ՇԱԲԱԹ, ՍԵՊՏԵՄ-ԲԵՐ 11ի կէսօրէ յետոյ ժամը 3:00ին Օծումը պիտի կատարէ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ:

Յաջորդ օրը, Խաչվերացի Տօնին, առաւօտեան ժամը 10:30ին, Նորին Սրբութիւնը պիտի մատուցանէ Սուրբ Պատարագ եւ տայ իր հոգեւոր պատգամը: Հաւատացեալներ սիրով կը հրաւիրուին Սուրբ Պատարագի արարողութեան ներկայ գտնուելու:

Երեկոյեան ժամը 5:00ին, Universal Hilton Պանդկին մէջ տեղի պիտի ունենայ Պաշտօնական ճաշկերոյթ՝ նուիրուած Մայր Եկեղեցւոյ կառուցման աւարտին եւ ի յարգանս Վեհափառ Հայրապետին:

Ձեր տոմսերը ապահովելու համար հաճեցէք հեռաձայնել Առաջնորդարանի Գրասենեակ (818) 558-7474 թիւով: